

Հուլիսի 7՝ Հայաստանի ազգային գրադարանի օր

Հուլիսի 7-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ Ազգային գրադարանի օրվան նվիրված միջոցառում: Բացման խոսքով հանդես եկավ ՀԱԳ հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը: Օրվա կապակցությամբ գրադարանի աշխատակիցներին շնորհավորեց ՀԱԳ տնօրեն Տիգրան Զարգարյանը: Ելույթներով հանդես եկան և գրադարանի աշխատակիցներին ողջունեցին փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լիլիթ Սարվազյանը, բանաստեղծ, գրող Գագիկ Վարդանյանը: Շնորհավորական խոսք ասացին և ասմունքով հանդես եկան նաև Աիդա Ասատրյանը և Ժասմեն Գևորգյանը: Երաժշտական կատարումներով հանդես եկան «Ծիծեռնակ» պարարվեստ թատրոն ստուդիայի սան Սյուզաննա Խաչատրյանը, ինչպես նաև Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Ներսիսյանը: Դաշնամուրային գեղեցիկ կատարումներով գրադարանի աշխատակիցներին շնորհավորեց ընթերցող Սեվակ Հովհաննիսյանը:

Միջոցառման ավարտին գրադարանային գործին մատուցած ծառայությունների և աշխատանքային երկարամյա գործունեության համար Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը, Արևիկոմի նախագահ Սրբուհի Կիզիրյանը պատվոգրեր հանձնեցին Ազգային գրադարանի մի խումբ աշխատակիցների: